ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 4, 1953 Общественные науки

Հ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

1953 թ. ապրիլի 16-ին, 77 տարեկան հասակում վախճանվեց բազմավաստակ գիտնական, սովետական լեզվաբանության ականավոր ներկայացուցիչ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ, Երևանի՝ Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի պրոֆեսոր Հրաչյա Հակոբի Աճառյանը։

Պրոֆ. Հ. Աճառյանը 55 տարիների իր գիտական-ստեղծագործական բեղմնավոր կյանքի ընթացքում գրել է մոտ 200 գիտական մեծարժեք աշխատություններ՝ միաժամանակ անխոնջ կերպով, մինչև կյանքի վերջին օրը շարունակել է իր սիրած մանկավարժական աշխատանքը, դասախոսելով Պետական համալսարանում։

Պրոֆ. Հ. Աճառյանը ծնվել է Կ. Պոլսում, 1876 թ. մարտի 8-ին, արհեստավորի ընտանիքում։ Նախնական և միջնակարգ կրթություն ծննդավայրում ստանալուց հետո, նյութական ամենածանր պայմաններում նա շարունակում է ուսումը Փարիզում և ավարտում Սորբոնի համալսարանը։ Կարճ ժամանակով Ստրասբուրգում լսելով հայտնի հայագետ Հյուբշմանի դասախոսությունները, գալիս է Էջմիածին, նշանակվում է Գևորգյան ճեմարանի ուսուցիչ։ 1902 թ. նույն պաշտոնով տեղափոխվում Շուշի, ապա՝ այլ քաղաքներ։ Այս թափառական կյանքի ընթացքում է, որ նա մեծ եռանդով ուսումնասիրում է հայերենի մի շարք բարբառներ, որոնց մասին հետագայում գրում է առանձին աշխատություններ։

Դեռևս ուսանողական տարիներից Հ. Աճառյանը լույս է ընծայում իր առաջին գիտական աշխատությունները։ Նա իր գիտական գործունեությունը սկսում է Ասլան-բեկի բարբառին նվիրված մի ուսումնասիրությամբ, որը լույս է տեսնում 1898 թ.։

Այնուհետև հաջորդաբար լույս են տեսնում նրա մի շարք աշխատությունները՝ գերազանցապես նվիրված հայերենի բարբառներին և այլ հարցերի։

1909 թվականին լույս է տեսնում Հ. Աճառյանի՝ նախասովետական տարիների լավագույն աշխատությունը՝ „Classification des dialectes armeniens" հմտալից հետազոտությունը, որտեղ առաջին անգամ տրվում էր հայերենի բարբառների գիտական համակարգությունը։ 1911 թ. լույս է տեսնում այդ աշխատության ընդարձակ խմբագրությունը հայերեն լեզվով՝ «Հայ բարբառագիտություն» վերնագրով։ 1913 թ. որպես Էմինյան ժողովածուի 9-րդ հատոր լույս է տեսնում Աճառյանի «Գավառական բառարան» բաղկացած 1200 էջից, որը մնում է հայերենի գավառական լավագույն բառարաններից մեկը։

Չնայած իր բազմակողմանի գիտելիքներին, մի շարք լեզուների իմացությանը, Հ. Աճառյանը նախասովետական տարիներին հնարավորություն չի ունենում ամբողջովին նվիրվելու իր սիրած զբաղմունքին՝ գիտությանը։ Գավառական հայ ուսուցչի ծանր կյանքը նրան քարշ է տալիս մի քաղաքից մյուսը, մի գպրոցից մի այլ գպրոց։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո պրոֆ. Աճառյանը գալիս է Երևան, նշանակվում Երևանի Պետական համալսարանի դասախոս և ամբողջովին նվիրվում մանկավարժական ու գիտական աշխատանքին։ Սովետական պայմաններում ամբողջ 30 տարի նա ստեղծագործում է, սովետական լեզվաբանական գիտությունը հարստացնելով բազմաթիվ կապիտալ ու մեծարժեք աշխատություններով։

1925—1932 թթ. Երևանում լույս է տեսնում պրոֆ. Հ. Աճառյանի կարևորագույն աշխատություններից մեկը «Հայերենի արմատական բառարանը», բաղկացած 6 մեծադիր հատորներից։ Այդ աշխատությունը, որտեղ խտացած է հեղինակի երկար տարիների պրպտումների ու ջանասեր հետազոտությունների արդյունքը, նշանակալից երևույթ է հայագիտության մեջ և արժանացել է խոշոր մասնագետների հիացմունքին ու բարձր գնահատմանը։

1940 թվականին լույս տեսավ պրոֆ. Հ. Աճառյանի մյուս արժեքավոր հետազոտության՝ «Հայոց լեզվի պատմության» Ա. հատորը։ Այս կարևոր աշխատությունը, որի երկրորդ հատորը լույս տեսավ 1952 թվականին, հայոց լեզվի պատմության մասին առաջին ամբողջական ուսումնասիրությունն է, որտեղ հեղինակը հետևելով պատմահամեմատական մեթոդին, շարադրել է հայոց լեզվի կազմավորման ու զարգացման ամբողջ պատմությունը՝ օգտագործելով փաստական հարուստ նյութ։

1942—1948 թթ. լույս են տեսնում Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան» հինգ հատորանոց աշխատության չորս ստվար հատորները։ Մանրակրկիտ հետազոտության արդյունք հանդիսացող այդ ծավալուն աշխատությունը ստուգաբանում ու ներկայացնում է ամբողջ հայ հին մատենագրության պարունակած անձնանունները, դրանով էլ միաժամանակ տալով կենսագրական բառարանը հայ հին գրականության, պատմագրության, կուլտուրայի բոլոր ներկայացուցիչների, որը հարուստ նյութ կարող է մատակարարել հայ հին գրականությամբ ու պատմությամբ զբաղվողներին։

Այդ նույն ժամանակաշրջանում, շարունակելով հետազոտել հայերենի բարբառները, պրոֆ. Հ. Աճառյանը առանձին գրքերով հրատարակել է մի շարք բարբառների մասին իր հետազոտությունները, ինչպես՝ «Երզն-

նություն Նոր-Նախիջևանի բարբառի» (1925 թ.), «Քննություն Մարաղայի բարբառի» (1926 թ.), «Քննություն Ագուլիսի բարբառի» (1936 թ.), «Քննություն Պոլսի բարբառի» (1940 թ.), «Քննություն Համշենի բարբառի» (1947 թ.), «Քննություն Առտիալի բարբառի» և այլն։

Պրոֆ. Հ. Աճառյանը իր կյանքի վերջին տարիներին երիտասարդական ավյունով շարունակում էր աշխատել «Լիակատար քերականություն հայոց լեզվի» ծավալուն աշխատության վրա, որտեղ տրվում է հայոց լեզվի քերականությունը 562 լեզուների համեմատությամբ։ 12 հատորանոց սույն կապիտալ աշխատության 1-ին հատորը 1952 թ. լույս ընծայեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան։

Բացի վերոհիշյալ աշխատություններից, անցած երեք տասնամյակների ընթացքում առանձին գրքերով և պարբերական մամուլում լույս են տեսել պրոֆ. Հ. Աճառյանի մի քանի տասնյակ այլ աշխատությունները, այդ թվում պարսկերենի, գրաբարի ձեռնարկները և այլն։

Իր երկարամյա մանկավարժական բեղմնավոր գործունեության ընթացքում պրոֆ. Հ. Աճառյանը Պետական համալսարանում պատրաստել է բազմաթիվ լեզվաբան կադրեր։

Պրոֆ. Աճառյանը թողել է ավարտված կամ թերի մի շարք ձեռագիր անտիպ աշխատություններ։

Սովետական գիտական հասարակայնությունը բարձր է գնահատել պրոֆ. Հ. Աճառյանի մատուցած ծառայությունները սովետական լեզվաբանության զարգացման ընդհանրում։ Պրոֆ. Հ. Աճառյանին 1935 թ. շնորհվում է գիտության վաստակավոր գործչի կոչում, 1943 թվականից՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հիմնադրման առաջին իսկ օրից նա ընտրվում է Ակադեմիայի իսկական անդամ և ակտիվ կերպով մասնակցում է նրա գիտական աշխատանքներին։